ՈՐՈՇՈՒՄ

«ԱՎՐՈՐԱ ՍԹԱՐ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

ք. Երևան 17.05.2024թ.

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (անսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով , «ԱՀՀԿ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.13 ենթակետով սահմանված դրույթները, ինչպես նաև այն փաստը, որ «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի կարիքների համար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՀՀԿ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ավրորա Սթար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 17.01.2024թ կնքվել է թիվ ԱՀՀԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով գնման պայմանգիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր), սակայն Կատարողի կողմից պատշաճ կերպով չի իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները.

ՈՐՈՇԵՑԻ

«ԱՎՐՈՐԱ ՍԹԱՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և այդ նպատակով վերջինիս տվյալները ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն՝ Տ. Մատինյան